կապիտալ
ասեթ
մենեջմենթ

ՖՈՆԴԵՐԻ ՌԵԵՍՏՐԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

Հաստատված է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ տնօրենների խորհրդի 2013 թվականի մարտի 6-ի թիվ 2013.03.06-7 որոշմամբ

Խորհրդի նախագահ՝
Ա.Մկոյան

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կանոն 1-1. Կանոնակարգը: Անվանումը

(ա) Սակագների կանոնակարգը ներառում է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հաճախորդներին մատուցվող ծառայության սակագները սահմանող և դրա հետ կապված հարաբերությունները կարգավորող կանոններ:

(բ) Սակագների կանոնակարգի անվանումն է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության սակագների կանոնակարգ», իսկ կրճատ անվանումը՝ «Սակագների կանոնակարգ»:

Կանոն 1-2. Կառուցվածքը: Կոդիֆիկացիան և հղումները

(ա) Սակագների կանոնակարգը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ Գլուխ 1. «Ընդհանուր դրույթներ», Գլուխ 2. «Սակագները, դրանց հաշվարկումն ու վճարումը»:

(բ) Բաժինները համարակալվում են արաբական թվերով:

(գ) Վերնագրերը միավորում են Կանոններն ըստ գործունեության կամ կարգավորման առարկայի: Սակագների կանոնակարգի օգտագործման պարզության նպատակով Վերնագրերը համարակալվում են ըստ հերթականության: Վերնագրի անվանումը համառոտ բնորոշում է դրանում միավորված Կանոնների առարկան:

(դ) Օգտագործման հարմարության և պարզության համար Կանոնները վերնագրվում են և համարակալվում՝ ըստ Վերնագրի համարի հերթականության (օրինակ՝ «Կանոն 2.1»-ը նշանակում է երկրորդ Վերնագրի ներքո գործող առաջին Կանոնը):

(ե) Կանոնն ունի հետևյալ կառուցվածքը՝

(1) Կանոնը բաղկացած է Ենթականոններից, որոնք համարակալվում են փակագծերում ներառված հայերեն փոքրատառերով (օրինակ՝ (ա), (բ) և այլն).

(2) Ենթականոնը բաղկացած է Կետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառված արաբական թվերով (օրինակ՝ (2)).

(3) Կետը բաղկացած է Ենթակետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառված հայերեն մեծատառերով (օրինակ՝ (Բ)):

(զ) Սակագների կանոնակարգում հղումները կատարվում են հետևյալ կանոններով՝

(1) վերնագրին հղումը կատարվում է Վերնագրի համարի նշմամբ և ենթադրում է տվյալ վերնագրի բոլոր Կանոնները.

(2) այլ Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին հղում կատարելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «1-3(բ)(5)(Ա) Կանոնի համաձայն» հղումը նշանակում է «1-3 Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն».

(3) եթե հղում է կատարվում նույն Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին, կամ նույն Ենթականոնի Կետին կամ Ենթակետին, կամ նույն Կետի Ենթակետին, ապա հղում կատարելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «(բ)(5)(Ա) ենթականոնի համաձայն» հղումը նշանակում է «սույն Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն».

(4) Սակագների կանոնակարգի որևէ Վերնագրի (Կանոնի, Ենթականոնի, Կետի և այլն) հղում կատարվում է առանց «Սակագների կանոնակարգ» բառերի օգտագործման: Համապատասխանաբար, եթե հղում է կատարվում որևէ ենթակետի առանց կետը նշելու, ապա հղումը համարվում է կատարված տվյալ կետի ենթակետին:

Կանոն 1-3. Սակագների կանոնակարգի ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

(ա) Սակագների կանոնակարգը հաստատվում է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում 2013 թվականի ապրիլի 1-ից:

(բ) Սակագների կանոնակարգը ուժը կորցրած է ճանաչվում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից՝ այն ուժը կորցրած ճանաչելու պահից:

(գ) Ընկերությունը Սակագների կանոնակարգի փոփոխությունների վերաբերյալ պատշաճ ծանուցում է իր Հաճախորդներին: Պատշաճ է համարվում Ընկերության ինտերնետային կայքում Սակագների կանոնակարգի տեղադրումը, ինչպես նաև Ընկերության գործունեության վայրում նրա հրապարակումը:

Կանոն 1-4. Օրենսդրությունը: Նպատակն ու մեկնաբանությունը

(ա) Սակագների կանոնակարգը իրավական ակտ է և ընդունվում է համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ

հոդվածի, հիմք ընդունելով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածը:

Կանոն 1-5. Հասկացություններ

Սակագների կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված նույն իմաստը, այդ թվում՝

«Հաճախորդ»	ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն օգտվում է Ընկերության ծառայություններից կամ դիմում է Ընկերությանը դրանցից օգտվելու նպատակով.
«Սակագին»	Հաճախորդի կողմից Ընկերությանը՝ նրա կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափ՝ արտահայտված տոկոսով կամ ՀՀ դրամով ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ:

ԳԼՈՒԽ 2. ՍԱԿԱԳՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆ ՈՒ ՎՃԱՐՈՒՄԸ

Կանոն 2-1. Սակագները

(ա) Ընկերության կողմից ծառայությունները մատուցվում են հետևյալ սակագներով՝

(1) Կենսաթոշակային/արժեթղթերի հաշվի բացում և ֆոնդերի տեսակի/դասի ընտրություն

		Սակագին (ՀՀ դրամ)
1.	Ֆիզիկական անձի համար	անվճար
2.	Անհատ ձեռնարկատիրոջ համար	անվճար
3.	Իրավաբանական անձի, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի համար	անվճար
4.	Հաշվի սպասարկում	անվճար

(2) Անհատական տեղեկությունների փոփոխություն

		Սակագինը (ՀՀ դրամ)
1.	Ֆիզիկական անձի համար	անվճար
2.	Անհատ ձեռնարկատիրոջ համար	անվճար
3.	Իրավաբանական անձի, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ Իրավաբանական անձի համար	անվճար

(3) Փայերի թողարկում, փոխանակում, մարում

(Ա) Փայերի թողարկման, փոխանակման, մարման վճարի չափը կամ դրանց հաշվարկման կարգը սահմանվում է Ֆոնդերի կանոններով:

(4) Փայերի մուտքագրում կենսաթոշակային/արժեթղթերի հաշվին

		Սակագինը (ՀՀ դրամ)
1.	Փայերի մուտքագրում կենսաթոշակային/արժեթղթերի հաշվին	անվճար

(5) Տեղեկությունների տրամադրում

(Ա) Ընկերության վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունների (իրավական ակտերի) թղթային տարբերակով տրամադրման համար Ընկերության կողմից Հաճախորդից գանձվող վճարի չափը չի գերազանցում դրա պատրաստման և տրամադրման համար կատարված ծախսերը:

(Բ) Կենսաթոշակային/արժեթղթերի հաշվի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում

		Տրամադրման եղանակ	Սակագինը (ՀՀ դրամ)
1.	Տարին մեկ անգամ Հաճախորդին՝ նրա կենսաթոշակային/արժեթղթերի հաշվում արտացոլված նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին տեղեկատվության տրամադրում	Էլեկտրոնային	անվճար
		թղթային	անվճար
2.	Երկրորդ և հերթական անգամները Հաճախորդին՝ նրա կենսաթոշակային/արժեթղթերի հաշվում արտացոլված տեղեկատվության տրամադրում (այդ թվում վճարված հարկերի մասին տեղեկատվություն)	Էլեկտրոնային	անվճար
		թղթային՝ առձեռն տրամադրում	Փաստաթղթի մեկ էջը 50 ՀՀ դրամ: Եթե գանձվելիք գումարի չափը կազմում է մինչև 500 ՀՀ դրամ, տեղեկատվությունը տրամադրվում է անվճար: Գանձվող վճարի առավելագույն չափը 5000 ՀՀ դրամն է
		թղթային՝ փոստային առաքում	Փաստաթղթի մեկ էջը 50 ՀՀ դրամ՝ գումարած փոստային առաքման ծախսերը: Եթե գանձվելիք գումարի չափը կազմում է մինչև 650 ՀՀ դրամ, տեղեկատվությունը տրամադրվում է անվճար

(6) Ներդրումային փայերի փոխանցում

		Սակագինը (ՀՀ դրամ)
1.	Առուվաճառքի (այդ թվում՝ ՌԵՊՈ և հակադարձ ՌԵՊՈ գործառնություններով), ժառանգության (իրավաջորդության) և նվիրատվության հիմքերով ներդրումային փայերի փոխանցում մեկ արժեթղթերի հաշվից մյուսին	Ներդրումային փայերի հաշվարկային արժեքի 0.05%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան 5 000 ՀՀ դրամը և ոչ ավելի, քան 500 000 ՀՀ դրամը
2.	Արգելադրման (գրավադրման) հիմքերով ներդրումային փայերի փոխանցում մեկ արժեթղթերի հաշվից մյուսին	Ներդրումային փայերի հաշվարկային արժեքի 0.05%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան 5 000 ՀՀ դրամը և ոչ ավելի, քան 500 000 ՀՀ դրամը

(7) Ներդրումային փայերի արգելադրում (գրավադրում)

		Սակագինը (ՀՀ դրամ)
1.	Ներդրումային փայերի արգելադրում (գրավադրում)	Ներդրումային փայերի հաշվարկային արժեքի 0.02%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան 2 000 ՀՀ դրամը և ոչ ավելի, քան 200 000 ՀՀ դրամը
2.	Դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի որոշման հիման վրա արգելադրում (գրավադրում)	անվճար
3.	ՌԵՊՈ և հակադարձ ՌԵՊՈ գործարքների արդյունքում ներդրումային ֆոնդի փայերի գրավադրում	Յուրաքանչյուր գործարքը 1 000 ՀՀ դրամ

(8) Ներդրումային փայերի արգելադրման և գրավադրման դադարեցում

		Սակագինը (ՀՀ դրամ)
1.	Ներդրումային փայերի արգելադրման (գրավադրման) դադարեցում	անվճար

Կանոն 2-2. Սակագների հաշվարկման և վճարման կարգը

(ա) Սակագների կանոնակարգով նախատեսված սակագները չեն ներառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվող ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):

(բ) Ընկերության ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է բացառապես ՀՀ դրամով, բացառությամբ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի:

(գ) Եթե Ընկերության կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքն արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է ՀՀ դրամով արտահայտված գումարի, որի նկատմամբ հաշվառվում է համապատասխան տոկոսը, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով ոչ ռեզիդենտ է: Տվյալ դեպքում ցուցանիշի արժեքը արտահայտվում է արտարժույթով:

(դ) Եթե Ընկերության կողմից «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով ռեզիդենտ համարվող Հաճախորդին մատուցվող ծառայության չափորոշիչ ցուցանիշի արժեքն արտահայտված է արտարժույթով, ապա ծառայության դիմաց գանձվող վճարը հաշվարկվում է վճարը գանձելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի հաշվարկային փոխարժեքով:

(ե) Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է բանկային փոխանցման միջոցով: Ընկերության ներքին

իրավական ակտերով նախատեսված դեպքերում մատուցվող ծառայությունների համար վճարը կարող է Հաճախորդից գանձվել անակցեպտ գանձման միջոցով:

(զ) Այն դեպքում, երբ սույն Կանոնակարգին համապատասխան հաշվարկված գումարները՝ ԱԱՀ-ը ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և նաև որոշակի լումաներից, ապա կատարվում է մաթեմատիկական կլորացում:

(է) Սույն Կանոնակարգով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարում կատարելու համար սահմանված ժամկետում համապատասխան վճարը չկատարելու դեպքում Ընկերությունը տվյալ հաճախորդի նկատմամբ կարող է հաշվարկել տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15%-ի չափով: